ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ. ՎԱՀԱՆՍ



ԴՐՈՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱՆՐԻ ԲԵՌՆԱՐ ԴԸ ՊԵԼԱԺԵՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԱՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ՌՈՒԴՈԼՖ ՊԵՍԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՖՈՐՎԻԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԺՈԶԵՖ ՖՐԱՆՉԻՍԿԻՆ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԱԼԱՆՍՈՒՄ

Մայիսի 17-ին, հինգշաբթի օրը, ժամը 17.30-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաշարժով մեկնեց դեպի Վալանս: Վալանսի քաղաքամերձ մայրուղու վրա շրջանի նահանգապետը, ի գլուխ պետական, քաղաքային և զինվորական իշխանությունների ներկայացուցիչների, դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Հայոց Հայրապետին և ապա իր անձնական ինքնաշարժով Նրան առաջնորդեց դեպի քաղաքի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որի դռան առաջ հավաքված հայ հավատացյալների խումներամ բազմությունը ծափողջույններով ողջունեց Վեհափառ Հայրապետի ժամանումը: Այստեղ ևս Նորին Սրբությանը մատուցվեց ավանդական աղն ու հացը:

Հայոց Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, ողջունեց և օրհնեց հավաքված բազմությանը:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ներկա էին Դրոմի նահանգապետ պրն. Անրի Բեռնար Պելաժեն, Դրոմի նահանգի սենատոր և Մոնտելիմարի քաղաքագլուխ պրն. Մորիս Պիկը, Վալանսի քաղաքագլուխ պրն. Ռուդոլֆ Պեսը, Սյուզ լա Ռուսի քաղաքագլուխ պր. Անրի Միշելը, Վալանսի և Վիենի եպիսկոպոս մոնսենյոր Դիդիե Լեոն Մարշանը, քույր եկեղեցիների և կրոնական այլ համայնքների հոգևոր պետեր, Վալանսի ազգային միության վարչության, ինչպես նաև տեղի հայոց կրոնական վարչության ընկերակցության անդամներ՝ գլխավորությամբ նախագահ Մանուկ Ստեփանյանի:

Դիմավորողների մեջ էր նաև Վալանսի հայոց հոգևոր հովիվ տ. Նարեկ քահանա Վարդանյանը:

Հավարտ եկեղեցական արարողության, Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց քաղաքից դուրս, Արդեշի շրջանում գտնվող «Լա Մյուզարդիեր» հյուրանոցը, ուր Վալանսի ազգային միության վարչությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպել էր հյուրասիրություն՝ մասնակցությամբ պետական բարձրաստիճան ներկայացուցիչների:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵԾ ՀԱՎԱՔՈՒՅԹ

Ժամը 21-ին Վալանսի «Սալ դե Ֆետ» ընդարձակ սրահում տեղի ունեցավ Հայոց Հայրապետի հանդիպումը Վալանսի և շրջակայքի հայության հետ: Հավաքույթին ներկա էին շուրջ 1000 հայեր: Հավաքույթը կազմակերպել էր Վալանսի հայոց կրոնական ընկերակցության վարչությունը:

Սրահի մուտքի առաջ Հայոց Հայրապետը դիմավորվեց ծափողջույններով, ծաղիկներով և տեղի հայկական դպրոցների երկսեռ աշակերտների խանդավառ արտահայտություններով, որոնք թարմ մեխակներ մատուցեցին Հայոց Հայրապետին:

Այնուհետև տեղի ունեցան բարիգալստյան և ողջույնի խոսքեր: Այս առթիվ ճառեր արտասանեցին Վալանսի հայոց կրոնական ընկերակցության նախագահ Մանուկ Ստեփանյանը, հայ ավետարանական համայնքից վերապատվելի Իսրայել Աբրահամյանը, հայ կաթողիկե համայնքի կողմից հայր Գևորգ Ճանտրյանը, Վալանսի հայոց հոգևոր հովիվ տ. Նարեկ քահանա Վարդանյանը և տ. Սերովբե սրբազանը:

Այս առթիվ Վալանսի ազգային միության նախագահ դոկտ. Մարկ Գոհարյանը, հանուն Վալանսի ազգային միության, ֆրանսերեն լեզվով Վեհափառ Հայրապետին դիմեց հետևյալ ուղերձով.

«Վեհափառ Հայրապետ,

Երկրորդ անգամ է, որ այս բեմից պատիվն ունենք բարիգալստյան խոսքեր և սրտագին մաղթանքներ ուղղելու հայ առաքելական եկեղեցու Գահակալին ու Նրա շքախմբին, հանուն Վալանսի ու նրա շրջակայքի Ազգային և միացյալ ընկերակցությունների:

Ձեր այցելությունն այս քաղաքը թանկագին և նշանակալից մի պարգև է մեզ համար, որովհետև, հանձին Ձեզ, Սուրբ Էջմիածինն է, որ այցելում է Վալանս, որովհետև սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռի Գահակալը՝ մեր սիրեցյալ Հայրապետը, չի մոռանում Իր զավակներին և այսպիսով նրանց նկատմամբ ցուցաբերում է Իր հայրական հոգատարությունը:

Համոզված եղեք, Վեհափառ Տեր, որ Վալանսի ողջ հայությունը Ձեր կողքին է, որ նա մասնակցում է Ձեր ուրախություններին և բաժանում Ձեր մտահոգությունները: Որպես օրինակ, կարող ենք նշել Լիբանանի վերջին իրադարձությունները, որոնք դեռ թարմ են մեր հիշողության մեջ: Դուք ոգեշնչողն ու կազմակերպիչն հանդիսացաք լիբանանահայ աղետյալների օգնության գործի և որևէ մեկից ավելի Ձեր բարոյական ու մանավանդ նյութական մասնակցությունը բերեցիք այդ շարժմանը: Մենք հպարտ ենք Ձեզ հայտնելու, որ Վալանսի հայությունը նույնպես իր համեստ բաժինն ունեցավ այդ օժանդակության գործում:

Այս սրահում կան լիբանանահայ մեր հայրենակիցներից ներկայացուցիչներ: Նրանց անունից ընդունեցեք մեր խորին շնորհակալություններն ու երախտագիտությունը այն ամենի համար, ինչ Դուք արեցիք հոգուտ և ի մխիթարություն մեր կարոտյալ եղբայրների և քույրերի:

Մենք ապրում ենք Ֆրանսիայում, ոչ թե մի աքսորավայրում կամ օտար հողի վրա, այլ մի գեղեցիկ և ազատ երկրում, որն ընդունեց մեզ ինչպես իր հարազատ զավակներին, երկիր, որ մենք սիրում ենք մեր ամբողջ սրտով և որին ծառայում հավատարմորեն:

Բայց մենք միաժամանակ աշխատում ենք պահպանել, մշակել ու զարգացնել այն, ինչ ժառանգել ենք մեր անցյալից՝ մեր լեզուն, մեր ավանդու-

թյունները, մեր եկեղեցու կյանքը: Այդ է, որ մենք փորձում ենք անել ամեն տարի, ապրիլի 24-ին կամ Վարդանանց տոնին և կամ որևէ այլ տոնակատարության հարգելով մեր նահատակների և նախնիների հիշատակը, ամեն կիրակի հաճախելով մեր եկեղեցիները և աղոթելով մեր հայրերի Աստծուն, կամ ամեն օր մեր ընտանեկան օջախներում աշխատելով պահպանել և մեր զավակներին փոխանցել մեր ազգային սրբությունները:

Թույլ տվեք համառոտակի մեջբերել այստեղ այն խոսքերը, որ Վալանս Ձեր նախորդ այցելության ժամանակ Դուք արտասանեցիք Ձեր սքանչելի ճառի մեջ. «Երբ ինձ տեղափոխող գնացքը կանգ առավ Վալանսի երկաթուղու կայարանում, վալանսահայերի մի մեծ խումբ մոտեցավ ինձ և նվիրեց մի ծաղկեփունջ: Ես այդ ծաղիկները դրեցի իմ սրտի վրա և ինձ հետ տարա սուրբ Էջմիածին»:

Մենք վստահ ենք, որ այդ ծաղկեփունջը միշտ զարդարում է Լուսավորչի կանթեղը, և հույս ունենք, որ Ձեր ներկա ճանապարհորդությունը մի քանի ծաղիկ ևս կավելացնի այդ ծաղկեփնջի վրա:

Ձեր հավատարիմ զավակները, Վեհափառ Տեր, ծնրադրում են Ձեր առջև, մաղթում են Ձեզ երկար կյանք և հայցում Ձեր հայրական օրհնությունը»:

Վերջում բոլոր ներկաներին Իր պատգամն ու օրհնությունը տվեց Վեհափառ Հայրապետը հետևյալ ճառով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԱԼԱՆՍԻ «ՍԱԼ ԴԵ ՖԵՏ» ԴԱՀԼԻՃՈՒՄ
(17 մայիսի 1979 թ.)

Մեր ազգը այսօր իր համրանքով երևի մոտ յոթը միլիոնի կհասնի, որմե միայն երեք միլիոնը այսօրվա մեր վերածնած, ծաղկող և հառաջդիմող մայր հայրենիքին մեջ կապրի: Մոտ մեկ ու կես միլիոն հայեր կապրին մեր երկրի դրացի հանրապետություններուն մեջ, իսկ երևի մոտավորապես երկու միլիոն ալ սփյուռքի տարածքի վրա:

Անհավասիկ այսպիսի իրադրության մեջ, Հայոց Հայրապետը հոգևոր և ազգային պարտականությունը ունի այցի գալու իր հոտին, իր եկեղեցիներուն, իր ժողովուրդին: Ահա իմաստը Մեր ներկայության այստեղ, ձեր մեջ, սիրելի ժողովուրդ:

Մեր երկրորդ պարտականությունն է այցի գալեն հետո, Աստուծո օրհնությունը բաշխել ամենքիդ ս. Էջմիածնեն, այն լուսո խորանեն, որ հիմնըվեցավ մոտ հազար յոթը հարյուր տարիներ առաջ և տևապես մնաց հայ քրիստոնեության հավատքի վեմը, հիմնաքարը, մնաց լուսատու փարոսը հայ ոգեկանության, մնաց գերագույն ուժը ազգի պահպանման՝ ահարկու փոթորիկներու դեմ հանդիման:

Երկար է ողբերգություններու պատմությունը մեր ազգին, հատկապես 10-րդ դարեն մինչև գրեթե մեր օրերը, մինչև ահավոր Եղեռնը 1915-ի, երբ մեր ազգի գրեթե կեսը, զոհվեցավ: Եթե այդ ցեղասպանությունը չըլլար, այսօր մենք գոնե տասը միլիոննոց ժողովուրդ մը կըլլայինք: Այդ ահավոր հարվածը սպառնաց աշխարհի վրայեն սրբել հայությունը, բայց Աստված մեզ բոլորովին չմոռցավ, և մահամերձ հայությունը կարճ ժամանակ հետո իր կյանքի ուժերը հավաքեց և կարողացավ նույնիսկ թշնամիին հաղ-

թել Սարդարապատի ճակատամարտով: Այդ հաղթանակը մեր պատմության մեջ միայն Վարդանանց պատերազմի հետ կարելի է համեմատել: Ճակատագրական հաղթանակ մը եղավ: Եթե, Աստված մի արասցե, այդտեղ հայությունը պարտություն կրեր, անշուշտ թշնամին իր ծրագիրը պիտի ամբողջացներ, բնաջինջ ընելով նաև Արևելյան Հայաստանը: Եվ այդ հաղթանակի մեջ ս. Էջմիածինն ու հայ հոգևորականությունը կարևոր դեր ունեցան, Գևորգ Ե հայրենասեր հայրապետի օրոք:

Եվ հրաշքի համազոր այդ հաղթանակով փրկվեցավ Արևելահայաստանը, հիմնվեցավ Հայաստանի պետությունը հազար տարվան գերութենեն հետո, և այսօր այդ պետությունը կշարունակե իր հաղթական երթը հետզհետե վերաշինելով, աճեցնելով, ծաղկեցնելով իր ազգային մշակույթը այն անսասան հավատքով, թե նույն Աստուծո օգնությամբ հայ ազգը իր բոլոր ազնիվ իդեալներու իրականացման պիտի հասնի օր մը անպայման:

Եվ այսօր, սիրելի ժողովուրդ, Մենք Մեր ուժերով կաշխատինք արժանի դառնալ մեր նախորդ հայրենասեր հայրապետներուն և Մեր պարտքը կատարել, մեր երկրի պայմաններուն մեջ, հետզհետե ավելի զորացնելով, շենցընելով մեր եկեղեցիները և հետզհետե մեր ժողովուրդի զավակները հավաքելով մեր եկեղեցվո կամարներուն տակ: Մենք կհավատանք, թե Քրիստոս և Իր Ավետարանը միայն անցյալի արժեքներ չեն, այլ նաև այսօր նույն թարմությամբ, նույն ուժգնությամբ, նույն պայծառությամբ, նույն ներգործությամբ կենդանի ուժեր են ոգեկան, մարդը և ժողովուրդները բարձրացնելու համար դեպի բարոյական կյանքի ավելի բարձր մակարդակ:

Մեր օրերուն, գրեթե ամեն տեղ, մարդկային ընկերություններու մեջ, որոշ տագնապալի վիճակներ կան, թե՛ ընկերային և թե՛ ընտանեկան կյանքեն ներս: Դեռևս հոգեկան խռովահույզ վիճակներ, ներքին անբավարարություններ, ներքին հուսալքումներ, և տակավին այնքան անկարգություններ, թշնամություններ ազգերու միջև, նույնիսկ արյունահեղ պատերազմներ:

Այսպիսի իրադրության մեջ, Մենք՝ քրիստոնյաներս, համարձակությամբ կուգանք ըսելու, որ արդի կյանքի բարեշրջումի ճանապարհին Քրիստոսի Ավետարանը իր փրկարար դերը կարող է կատարել: Մենք կհավատանք, թե ոգեկան և բարոյական իմաստով, ամենամեծ հեղափոխությունը Քրիստոսի սիրո Ավետարանն է՝ ի զորու բոլոր ժամանակներու և բոլոր ժողովուրդներու համար: Ահավասիկ այս համոզումով և այս հավատքով է, որ Մենք կաշխատինք այսօր:

Ձեզի կրնանք վկայություն բերել, որ հոգևոր սնունդի կարևորությունը և ծարավը հետզհետե կխորանա նաև մեր կողմերը: Հայաստանցի մեր ժողովուրդը լայն զանգվածով կդիմե եկեղեցի, գտնելու համար իր հոգիի մխիթարությունը: Եվ բարեբախտաբար, պայմանները բոլորովին թույլատու են. ոչ մեկ արգելք կա կրոնական կյանքի հառաջդիմության ճանապարհի վրա:

Մենք լավատես ենք Եկեղեցվո ապագայի նկատմամբ: Հետևաբար մեր պարտքն է, իբրև աշխարհի հնագույն եկեղեցիներեն մեկը, գիտակցությունը ունենալ մեր Մայր եկեղեցվո արդի կարևորության: Մեր առջև պարտականություն կդրվի բոլոր եկեղեցական համայնքները զորացնել, մեր ամբողջ ժողովուրդը հավաքել մեր եկեղեցիներու կամարներուն տակ: Մեր ժողովուրդի բոլոր զավակները հավասարապես մեր եկեղեցվո զավակներն են: Եվ մենք բոլորի հանդեպ նույն սերը և նույն հոգատարությունը պետք է ունենանք:

Մեր ազգը թեև փոքր, բայց իր առաքելությամբ աշխարհի ամենաառա-

ջադեմ ժողովուրդներեն, ամենաոգեղինացած ժողովուրդներեն մեկն է: Հայ ժողովուրդը աշխարհի վրա, իր ստեղծումեն ի վեր, առավելապես առաքելություն մըն է քաղաքակրթության և ոգեկանության: Այդ հին ժառանգության հիմքերուն վրա ամուր կանգնած, մենք պետք է առաջ ընթանանք բոլոր քրիստոնյա ժողովուրդներու շարքին և մեր պարտքը կատարենք այս արևին տակ:

Կրկին կբերենք օրհնություն և ողջույն ս. Էջմիածնեն և վերածնած մեր մայր երկրեն, ու բարի մաղթանքներ, որ Աստված ձեզ պահե, պահպանե քաջառողջ, ձեր ընտանեկան հարկերուն տակ երջանիկ, ձեր բարի և առաքինի գործերու հաջողությամբ:

Կեցցե՛ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին:

Կեցցե՛ Վալանսի և շրջակայքի հայ համայնքը:

Կեցցե՛ ասպետական և փառավոր ֆրանսական հայրենիքը այժմ և հավետ: Ամեն:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 18-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Վալանսի քաղաքագլուխ պրն. Ռուդոլֆ Պեսին:

Այցելության ընթացքում Հայոց Հայրապետի և մեծարգո քաղաքագլխի միջև փոխանակվեցին ճառեր և հուշանվերներ:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Դրոմի նահանգի նահանգապետ պրն. Անրի Բեռնար դը Պելաժեին, որտեղ մեծահարգ պրն. նահանգապետը Հայոց Հայրապետին ողջունեց հետևյալ ճառով.

«Ձերդ Սրբություն,

Այստեղ հավաքված բոլոր ներկաներիս համար մեծ պատիվ է ընդունել Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին Դրոմի շրջանի հայկական համայնքի կենտրոնը հանդիսացող Վալանս քաղաքում:

Հայ առաքելական եկեղեցին, որ Դուք առաջնորդում եք արդեն մոտ քսանչորս տարիներից ի վեր, առաջին եկեղեցիներից մեկն է եղել, որը հիմնվել է Քրիստոսի աշակերտների կողմից: Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնապես ընդունվել է որպես պետական կրոն 301 թվականին Տրդատ Գ թագավորի կողմից, որը քրիստոնյա է դարձել սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռքով, ավելի վաղ, քան Բյուզանդիայի Կոստանդիանոս կայսեր դարձը, որը նույն բանն արեց իր կայսրության սահմաններում:

Հայերի և ֆրանսիայի միջև հարաբերություններն սկիզբ են առել պատմության հեռավոր ժամանակներում: Դեռևս հինգերորդ դարից մեր երկրում երևում են հայ հոգևորականներ: Ավելի ուշ, Խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանում, ֆրանկներն ու հայերը միասին կռվում են անհավատների դեմ: 1384 թվականին հայոց վերջին թագավոր Լևոն Լուսինյանը, որը ֆրանսիական ծագում ուներ, ապաստան է գտնում Ֆրանսիայում, որտեղ ջերմորեն ընդունվում է Կարլոս Զ-ի կողմից, որը նրան հատկացնում է օթևան և թոշակ: Նրա աճյունն այժմ հանգչում է Սեն-Դընի բազիլիկայում մեր սեփական թագավորների աճյունների կողքին:

Արդարև, բոլոր ժամանակներում, ձեր եկեղեցին և ձեր ժողովուրդը

նշավակ են դարձել կամայականության և բռնությունների: Եվ ձեր պատմությունը եղել է խաղաղության երկարատև մի որոնում: Այդպես է եղել հատկապես Զ—ԺԷ դարերում, երբ Հայաստանը, անկախ և երջանիկ մի երկիր, թատերաբեմ դարձավ վայրագ ներխուժումների և կոտորածների: Այդպես է եղել նաև 1895—1896 և մանավանդ 1915—1916 թվականներին, երբ թուրքերը Արևմտյան Հայաստանում գործադրեցին աներևակայելի մի սպանդ —որն իրավամբ պետք է կոչել ցեղասպանություն—պատճառ դառնալով տեղի հայ բնակչության կարևոր մի մասի տեղահանությանը: Հենց այդ տարիներին էր, որ Դրոմի մեր շրջանը, գիտակից այն պատմական կապերին, որոնք գոյություն են ունեցել Ֆրանսիայի և Հայաստանի միջև, ընդունեց առաջին հայ գաղթականներին, որոնց թիվը, ըստ 1926 թվականի մարդահամարի, հասնում էր արդեն 820-ի: Այս թիվն արագորեն աճեց մինչև 1939 թվականը: Այնուհետև, վերջին տասը տարիներին մանավանդ, դարձյալ մեծացավ Մերձավոր Արևելքի արաբական երկրներում ստեղծված քաղաքական աննպաստ կացության հետևանքով: Այսօր Արդեշի մեր ամբողջ նահանգում հայերի թիվը հասնում է 5700-ի:

Որպես ֆրանսիական լիիրավ քաղաքացիներ, մեր հայ բարեկամներն այս նահանգում իրենց եռանդուն մասնակցությունն են բերում մեր ազգային կյանքին: 1939—40 թվականների պատերազմը ֆրանսիայում առիթ հանդիսացավ Վալանսի հայկական համայնքին՝ ապացուցելու իր երախտագիտությունը Ֆրանսիայի հանդեպ: Վալանսաբնակ բազմաթիվ հայեր, մեր ժողովրդի զավակների հետ կողք-կողքի, քաջաբար կռվեցին հանուն Ֆրանսիայի ազատության, և նրանցից շատերն ընկան ռազմաճակատում հերոսի մահով: Այս հանդիսավոր առիթով, Ֆրանսիական Հանրապետության անունից, ես պարտք եմ համարում մեր երկյուղած հարգանքը բերել մարտակից մեր հայ եղբայրների հիշատակին:

Ինչպես քիչ առաջ մեր շրջանի գլխավոր Խորհրդի պրն. նախագահը հիշատակեց իր ելույթում, մեր հայ բարեկամները կարողացան նույնպես, ի նպաստ իրենց երկրորդ հայրենիքի, հանդես բերել իրենց ընդունակությունները, նախաձեռնության ոգին, բազմազան շնորհներ, աչքի ընկնելով իրենց կայունությամբ ու նաև մեծ խելացիությամբ: Այսպես, առանց ուրանալու իրենց ազգային պատկանելիությունը, նրանք կարողացան կատարելապես մերվել Դրոմի մեր հասարակության հետ, և այսօր մեր առօրյա կյանքում հանդիպում ենք բազմաթիվ հայ բանվորների, արհեստավորների, վաճառականների, արդյունաբերողների, պաշտոնյաների և արվեստագետների: Այստեղ ես կցանկանայի հաճույքով հիշատակել, որ Վալանսի քաղաքապետարանը իր բարձր պաշտոնատարների շարքում ունի նաև մի հայ խորհրդական:

Բարեկամական զգացումներով զեղուն այն խոսքերը, որ Ձերդ Սրբությունը բարեհաճեց արտասանել երեկ մեր երկրի նկատմամբ, մեծապես հուզեցին մեզ: Նույնպիսի հուզում պատճառեցին նմանապես այս առթիվ Ձեր հայրենակիցների կողմից մեր նկատմամբ ցուցաբերված երախտագիտության և համակրանքի վկայությունները: Անկասկած, դա արտահայտությունն էր այն բանի, որ Ֆրանսիան, ինչպես հիշատակեցիք երեկ, Ձեր ժողովրդի զավակներին ընդունեց մեծ սիրով և հարգանքով: Այդ վկայությունները բխում էին նրանց սրտերից, և մենք խորապես զգացինք այդ:

Եթե Ձեր հայրենակիցներն այսօր իրենք իրենց համարում են սրտով

ֆրանսիացիներ, մյուս կողմից՝ նրանք հպարտ են, որ կարողացել են պահպանել իրենց ավանդությունները, որոնց տևականացման նկատմամբ նրանք իրավացիորեն ցուցաբերում են մեծ նախանձախնդրություն: Քանի՞-քանի փոքրամասնություններ չկարողացան պահպանել և զարգացնել փոխօգնության և ազգային համերաշխության այն բարձր ոգին, որ հատուկ է եղել հայերին և որի նոր ապացույցը տվեցին նրանք Մերձավոր Արևելքում տեղի ունեցած վերջին իրադարձությունների առիթով:

Այս բոլորից բացի, նրանք ամուր և անաղարտ պահպանեցին իրենց բազմադարյան հավատքը: Վալանսի հայ առաքելական եկեղեցին նույնպես, որ մեզ հայտնի է իր բարձր ոգեկանությամբ, կարողացավ կենդանի պահել իր կրոնական հավատքը, որը հաճախ ենթարկված էր վտանգի: Այդ ուղղությամբ, ըստ մեզ, էական նշանակություն ունեցավ Ձերդ Սրբության ծավալած գործունեությունը սկսած 1955 թվականից, երբ Դուք կոչվեցիք հայ եկեղեցու գերագույն պետի պաշտոնին: Դուք վերակազմակերպեցիք բազում փորձություններից անցած հայ եկեղեցին և նրան տվեցիք բարձր դիրք և հեղինակություն: Դուք բաց արեցիք Էջմիածնի հոգևոր ճեմարանը, ստեղծեցիք հաստատուն միաբանություն, պատրաստեցիք երիտասարդ հոգևորականներ և վերանորոգեցիք շատ ավերված եկեղեցիներ: Ձեր բազմաթիվ ճանապարհորդությունները հնարավորություն տվեցին Ձեզ ապահովելու աշխարհով մեկ ցրված ձեր ժողովրդի ազգային և հոգևոր միասնությունը: Գիտակից այն ծանր պարտականության, որ վստահված էր Ձեզ որպես աշխարհի հնագույն եկեղեցիներից մեկի Հովվապետը, Դուք կարողացաք զանազան երկրներում ապրող հայերին տանել ձեր ավանդությունների խրախուսող վկայությունը՝ դառնալով այդպիսով այդ ավանդությունների կորովի ավանդապահը:

Բարի կամքի տեր մարդիկ կարող են միայն գնահատանքով արտահայտվել այն մասին, որ ձեր եկեղեցին նույնպես դիալոգի եկեղեցի է՝ բացված աշխարհին: Արդարև, մենք անչափ ուրախ ենք, որ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը, բարձր գնահատելով խաղաղության ի նպաստ Ձեր գործունեությունը, Ձեզ պարգևատրեց «Ժողովուրդների բարեկամության շքանշանով»:

Մենք հավատում ենք, որ մեր դարի մարդկությունը հետզհետե պիտի գտնի ոգու ճանապարհը: Բազմաթիվ են այն նշանները, որոնք ցույց են տալիս, որ քաղաքակիրթ մեր աշխարհը ձգտում է վերագտնել իր հավատը իր ճակատագրի նկատմամբ, ձգտում է պատրաստել մի երիտասարդություն, որ ավելի քան բնավ ծարավն ունենա ոգեկան արժեքների:

«Քսանմեկերորդ դարը լինելու է ոգեկանության դար կամ բոլորովին չի լինելու», ասել է Անդրե Մալրոն:

Դուք ևս, Ձերդ Սրբություն, այդ ապագային է, որ տանում եք այն ջահը, որը վառել է սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Նույնպիսի առաքելություն է վերապահված նաև Ֆրանսիային, և այդ հանգամանքը առավել ևս մեզ մոտեցնում է միմյանց:

Երեկ գիշեր Դուք աստվածային օրհնության մաղթանքներ ուղղեցիք մեր երկրին և ժողովրդին այնպիսի ջերմ խոսքերով, որոնք խորապես հուզեցին մեզ:

Տա Աստված, որ մեր երկու երկրները, նույն բաղձանքի մեջ միացած, մշտապես ապրեն խաղաղ ու երջանիկ, և Ֆրանսիան ամբողջ աշխարհի

համար մնա ընդմիշտ այն եղբայրական երկիրը, որը Ձեզ ընդունեց ազատության մեջ»:

Ընդունելությանը ներկա էր նաև Դրոմի նահանգի գլխավոր խորհրդի նախագահ, սենատոր և Մոնտելիմարի քաղաքագլուխ, մինիստր պրն. Մորիս Պիկը, որը Հայոց Հայրապետին ողջունեց հետևյալ ճառով.

ԴՐՈՄԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՄԻՆԻՍՏՐ ՊՐՆ. ՄՈՐԻՍ ՊԻԿԻ ՈՒՂԵՐՁԸ

Դրոմի նահանգի գլխավոր խորհրդի և նրա նախագահի համար բացառիկ պատիվ և մեծ ուրախություն է նահանգապետարանի այս դահլիճում ընդունել այսօր Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Սրբություն Վազգեն Առաջինին:

Մեր նահանգի ողջ բնակչության անունից ներկայացնում եմ մեր ամենահարգալից ողջույնը Նորին Սրբությանը և բարիգալստյան մեր ջերմ մաղթանքները՝ ուղղված Նրան և Նրա շքախմբի մեծարգո անդամներին:

Այս պահին մեր մտածումն ուղղվում է դեպի Էջմիածին, դեպի Հայաստանի կրոնական և բարոյական մայրաքաղաքը, դեպի Աթոռանիստը հայ առաքելական եկեղեցու:

Դրոմի մեր հայ հայրենակիցները, անտարակույս, իրենց հայացքն ուղղելով դեպի այդ սուրբ քաղաքը, որ քրիստոնեության նշանավոր սրբավայրերից մեկն է, մշտապես վառ են պահում իրենց հավատը և իրենց հույսը:

Հիրավի, նրանք կարողացել են իրենց նախնիների ավանդությունների և սովորությունների հանդեպ իրենց հավատարմությունը ներդաշնակորեն զուգակցել այն այժմեական և հրամայական պարտավորությունների ու պահանջների հետ, որ նրանց առաջադրում է ֆրանսիական հավաքական կյանքին իրենց պատկանելիությունը: Նրանք կարողացել են իրականացնել իրենց մեջ և իրենց համար այս արտակարգ հրաշքը. այն է՝ հավատարիմ մնալ հայ առաքելական եկեղեցիով խորհրդանշվող բարոյական արժեքներին և միաժամանակ փութաջան լինել իրենց առօրյա պարտականության մեջ:

Օգտվելով այսօր ինձ տրված առիթից՝ ես ուզում եմ հրապարակով հայտնել Ձեզ, թե ինչպիսի մեծ հարգանք ենք տածում ծագումով հայ դրոմցի մեր համաքաղաքացիների նկատմամբ, որոնք այնքան արժանի են դրան իրենց աշխատանքով, վերաբերմունքով և կյանքի օրինակով:

Ես ուզում եմ այստեղ արտահայտել նաև բարեկամության և սերտ համերաշխության մեր ամենաջերմ զգացումները նրանց հանդեպ: Տասնամյակներից ի վեր, ինչ նրանք բնակություն են հաստատել այս շրջանում, դարձել են այս երկրի լիիրավ քաղաքացիները, և մենք կարողացել ենք, ծանր փորձությունների և դժվարությունների ժամանակ, բազում անգամներ գնահատել նրանց անձնվիրությունն ու սերը ֆրանսիական մեծ հայրենիքի նկատմամբ:

Եվ վերջապես, ես կցանկանայի խնդրել Նորին Սրբությանը, որ, ի հիշատակ Վալանս Իր այցելության, նախ ընդունի մետաղյա այս փոքրիկ հուշատախտակը, որի վրա պատկերված է նահանգային ժողովը՝ բաղկացած 35 դրոմցիներից, որոնք ներկայացնում են մեր նահանգի բնակչությունը և որոնք կառավարում են այս նահանգը՝ նահանգապետի հետ գործակցաբար,

և ապա՝ ընդունի նաև Դրոմի նահանգի ընդհանուր խորհրդի պատվո այս մեդալը:

Նրա մեկ երեսին պատկերված են մեր նահանգի ամենահատկանշական հուշարձանները, Վերկորի արոտավայրերը՝ հարավային Ալպերի նախալեռնային շրջանի Լավանդի տնկիներով, և հին Վալանսը՝ ծորակավոր իր աղբյուրներով:

Մյուս երեսին պատկերված են այն արտադրանքները, որ գործունյա ւ աշխատասեր դրոմցիներն ստանում են իրենց արգավանդ հողից՝ հացահատիկներ, արոտավայրեր, որթատունկեր և մրգատու ծառեր:

Այս մեդալի եզրին, ի հիշատակ այս հիշարժան օրվա, ես փորագրել տվեցի հետևյալ բառերը. «Նորին Սրբություն Վազգեն Ա-ին—18 մայիս 1979»:

Ընդունելության վերջում շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսքով հանդես եկավ Հայոց Հայրապետը հայ եկեղեցու, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և նրա գահակալի հանդեպ ցույց տրված այս հարգալիր վերաբերմունքի համար՝ շեշտելով մշտամանակ Վալանսի և շրջակայքի հայության հավատարմությունն ու նվիրումը իրենց երկրորդ հայրենիքի՝ ասպետական Ֆրանսիայի հանդեպ:

* *
*

Ժամը 16.30-ին հյուրանոցի Իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը ընդունեց Վիենի և Վալանսի կաթոլիկ եպիսկոպոս Դիդիե Լեոն Մարշանի, Վալանսի ազգային միության վարչության, Հայագիտական ուսման կենտրոնի վարչության, ԺԱՖ-ի ներկայացուցիչների, ինչպես նաև համախարբերդցիական միության վարչության անդամների այցելությունները:

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը ընդունեց «Լը Դոֆինե լիբերե» և «Լը Պրոգրե» թերթերի թղթակիցների այցելությունը և պատասխանեց նրանց հարցերին:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Նույն օրը, ժամը 21-ին, Վալանսի հայոց կրոնական ընկերակցությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպեց ողջերթի մեծ ընդունելություն «Կրուա դ՝ Օր» հյուրանոցում՝ մասնակցությամբ ավելի քան 250 հայ և ֆրանսիացի հրավիրյալների:

Ընդունելության ժամանակ ճառերով հանդես եկան տ. Սերովբե սրբազանը և կրոնական ընկերակցության փոխնախագահ Լևոն Տեր-Սարգիսյանը:

Ընդունելությունը եզրափակեց Հայոց Հայրապետը Իր օրհնության խոսքով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ՎԱԼԱՆՍԻՆ

Մայիսի 19, շաբաթ:

Ժամը 19.30-ին Վալանսի Հ. Բ. Ը. Միության «Երվանդ Հյուսիսյան» սրահում ողջերթի ճաշկերույթ տրվեց Հայոց Հայրապետի պատվին Հ. Բ. Ը. Միության Վալանսի մասնաճյուղի կողմից:

Հրաժեշտի սույն ճաշկերույթին ճառերով հանդես եկան տ. Սերովբե և տ. Գևորգ սրբազանները, ինչպես նաև Բարեգործականի տեղական վարչության նախագահ Էդուարդ Թորոսյանը:

Ընդունելությանը ներկա էին շուրջ 150 հրավիրյալներ, որոնց թվում նաև Վալանսի նահանգապետարանի գրասենյակի տնօրեն պրն. Ֆիլիպ Դելանը:

Ողջերթի սույն ճաշկերույթի ավարտին Վեհափառ Հայրապետը հանդես եկավ հրաժեշտի հետևյալ հուզիչ խոսքով.

ՎԵՀԱՓԱՌԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԸ ՎԱԼԱՆՍԻ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՍՐԱՀՈՒՄ

(19 մայիսի 1979 թ.)

Անավասիկ բաժանումի ժամը հնչեց, և քիչ հետո Մենք պիտի մեկնինք դեպի Լիոն, անմոռանալի հիշատակներ տանելով այս գեղեցիկ քաղաքեն՝ Վալանսեն: Իսկապես անմոռանալի օրեր ապրեցանք:

Ամեն քաղաք իր մթնոլորտը, իր լույսը, իր երգը, իր բուրմունքը ունի: Վալանսը այդպիսի քաղաք է: Մենք կկարծենք, թե ոչ մեկ այլ քաղաք Ֆրանսայի մեջ Վալանսին չի նմանիր: Հայերն ալ հարկավ ազդված են այդ յուրահատուկ մթնոլորտեն: Եվ իրապես Վալանսի հայերն ալ քիչ մը կտարբերին ուրիշ տեղի հայերեն: Մենք սիրեցինք ձեզ: Ձեր միաձույլ համայնքը, ձեր ջերմությունը, անկեղծությունը և ձեր սրտաբուխ վերաբերմունքը իրապես շատ սիրեցինք Մենք:

Մեր այցելության ծրագիրը այնպես դասավորվեցավ, որ բաժանումի պահը տեղի կունենա այս տունին մեջ, Հ.Բ.Ը.Մ.-ի Վալանսի մասնաճյուղի հարկին տակ, որ հավաքատեղին է Բարեգործական Միության անդամներուն, միություն մը, որ Մեր սրտին շատ կխոսի: Իրոք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը բացառիկ չափերով միշտ նեցուկ եղած է Հայաստանյայց եկեղեցիին իր ծագումեն մինչև մեր օրերը: Հ.Բ.Ը.Մ.-ը յուրահատուկ միություն է հայ կյանքի մեջ, որ իր հարկին տակ կհամախմբե և կուզե համախմբել անխտիր բոլոր հայերը բարի գործի գաղափարի շուրջ:

Այստեղ բոլորի առջև դուռը բաց է: Բարի գործը հայ ժողովուրդի համար կենսական նշանակություն ունեցած է թե՛ անցյալի մեջ, բայց հիմա ալ, տրված ըլլալով մեր ազգի ճակատագիրը:

Կհիշենք կարդացած ըլլալ շատոնց, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության առաջին կանոնադրությունը, Պողոս Նուբարի և իր ընկերներու կազմածը 1906-ին, ուր շեշտը դրված էր օգնության հասնիլ կրթական և գյուղատնտեսական տեսակետներով գավառներու հայության, որ այնքան հետամնաց կյանք կապրեր օսմանյան ծանր լուծին և հալածանքներուն տակ: Մենք երբեմն ոգեկոչելով այդ շրջանները՝ առավելապես մեր ուշադրությունը կկեդրոնացնենք Իզմիրի և Պոլսո ազգային մշակութային կյանքին վրա: Սակայն գավառներու մեր ժողովուրդը միշտ հարստահարված՝ աղքատության ու տառապանքի մեջ ապրած է: Բարեգործական Միությունը, իբրև հիմնական նպատակ, այդ օրերուն որդեգրած էր նաև գավառի հայության օգնության հասնիլ:

Ահա այս մտահոգություններով ծնունդ առավ Հ.Բ.Ը.Մ.-ը, բայց կարճ ժամանակ անց, մեր ճակատագիրը դաժան ճանապարհով ընթացավ, և ամբողջ Արևմտահայաստանը ամայացավ 1915-ի ցեղասպանությամբ: Փրկվածներու

մեկ մասը տարածվեցավ ի սփյուռս աշխարհի, մեկ մասն ալ այսօրվա Հայաստան կրցավ փախչիլ: Նոր իրադրություն ստեղծվեցավ, նոր ցավեր, նոր կարիքներ: Հ.Բ.Ը.Մ.-ը այդ օրերուն ալ բախտորոշ դեր կատարեց, օգնության հասնելով հայ որբերուն, հայոց ծով կարիքներուն թե՛ այսօրվա Հայաստանի սահմաններեն ներս և թե՛ արտասահման:

Հ.Բ.Ը.Մ.-ը ուժեղ կազմակերպություններ ունեցած է նաև Կովկասի մեջ, կեդրոն ունենալով հատկապես Թիֆլիսը: Մեծ եղեռնեն հետո, երբ այսօրվա Հայաստանը որբերով լեցուն էր, երբ Երևանի փողոցներուն մեջ գաղթականներ անտեր անտիրական կթափառեին, երբ սովն ու հիվանդությունները ամեն օր տասնյակ մարդիկ կհնձեին և առավոտները սև կառքերը կուգային փողոցներեն դիակները հավաքելու, այդպիսի դժոխային պայմաններու մեջ ձեր մարդասեր Միությունը, որուն գլուխը կանգնած էին մեծ սիրտ ունեցող հայ մարդիկ, Նուբար փաշայի սերունդին արժանի, նախախնամական դեր կատարեց:

Այսօր պայմանները փոխված են: Բարեբախտաբար Հայաստանի մեջ ո՛չ սով կա, ո՛չ որբ կա և ո՛չ ալ աղքատություն: Մեր Հայրենիքը շատոնց արդեն ոտքի կանգնած է, վերաշինված ու բարեկեցիկ: Այսօր մենք երեք միլիոն ժողովուրդ ենք, և բոլորի մտածումն է՝ ավելի և ավելի վերաշինել դարեր շարունակ քարուքանդ եղած մեր երկիրը: Այսօր, Բարեգործականի առջև կդրվին հատկապես սփյուռքի հետ կապված հարցեր: Հայաստանը արտասահմանեն եկող օգնություններու կարիք չունի: Ժեստեր կարող են ըլլալ, օգտակար դառնալու համար այս կամ այն հատուկ ձեռնարկությանց, բայց ավելի անհրաժեշտություն կա անշուշտ արտասահմանի հայության վրա ուշադրություն դարձնելու, մասնավորապես կրթական տեսակետով, որպեսզի նոր սերունդները հայեցի դաստիարակություն ստանան: Այս աշխատանքը գիտենք որ կկատարվի, շատերը կկատարեն՝ մեր եկեղեցին, Բարեգործականը, ուրիշ միություններ: Բայց տակավին եղածը քիչ է, ավելին պետք է կատարել. դժվար է, բայց Մեր կարծիքով անհնար չէ: Ուր որ մարդիկ արտանց կաշխատին, այնտեղ նյութական միջոցներ կստեղծվին: Ուր որ ոգեշնչում ու հավատք կա դեպի հայ ժողովուրդը, այնտեղ գործը կհաջողի անպայման: Անկարելի բան չկա աշխարհի վրա: Ամեն ինչ մարդոցմե կախում ունի:

Անհավասիկ Բարեգործականի առջև դրված է ազգապահպանման հարցը, ապահովելու համար արտասահմանի հայության գոյատևումը: Այստեղ, Վալանսի մեջ կտեսնենք, որ լավ կազմակերպված է այս Միությունը: Մենք կմաղթենք պարոն Պուլլուքյանին, որ այս կազմակերպության հարազատ ոգիով իր ուժերը լարե, իր շուրջ հավաքե գործարար մարդիկ, որպեսզի Ֆրանսայի Բարեգործականն ալ իր բուն նպատակի ճամփուն մեջ մտնե հետզհետե:

1960-ին, առաջին անգամ ըլլալով Ամերիկա գացինք՝ Նյու Յորք և Կալիֆորնիա: Ոչ մեկ հայկական դպրոց կար հոն այն ատեն: Կային «կիրակնօրյա դպրոց» կոչվածները միայն, ուր անգլերեն լեզվով կրոնական դասեր կտրվեին: Ուրեմն, նույնիսկ եկեղեցիները հայերենով որևէ դասընթաց չէին կազմակերպած: Անձնասպանություն էր այդ մեզի համար:

Այսօր Հ.Բ.Ը.Մ.-ը վճռական դեր ունի կատարելիք կրթական գործի կազմակերպումի տեսակետեն:

Որով, Մենք հաջողություն կմաղթենք ձեզի, պարոն Պուլլուքյան, Մենք ձեր կողքին ենք, ս. Էջմիածնի օրհնությունը ձեզի հետ է: Մենք ուրախ ենք,

որ Դուք, այս ծանր պարտականությունը ստանձնած եք, որովհետև Դուք ունիք հայու գիտակցություն, ունիք իմացական բարձր կարողություններ, ունիք փորձառություն և մանավանդ բարոյական մեծ հեղինակություն այս երկրի մեջ:

Կշնորհավորենք այս մասնաճյուղը, ձեր տեղական վարչությունը, որ այնքան եռանդով կաշխատի: Կշնորհավորենք նաև Տիկնանց հանձնաժողովի նախագահուհին և անդամները բոլոր:

Կուզենք ոգեկոչել նաև հիշատակը Երվանդ Հյուսիսյանի, որուն անունը կկրե այս դահլիճը: Մարդ մըն էր, զոր Մենք ճանչցած ենք Մեր գահակալության առաջին օրերեն: Զինքը գնահատած, հարգած ենք իբրև բանիմաց, հավասարակշռված մտածողությամբ իմաստուն մարդ: Կաղոթենք անոր հոգիին խաղաղության և հավիտենական հանգիստին համար:

Իսկ այժմ, երբ պիտի բաժնվինք ձեզմե, կբաշխենք ձեզի բոլորիդ Մեր ամենաբարի մաղթանքները և օրհնությունները:

Թող Տերը միշտ հաստատուն և լուսառատ պահպանե ձեր այս Տունը և բոլորիդ պարգևե արևշատ, երջանիկ անհատնում օրեր:

Նույն օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաշարժով վերադարձավ Լիոն: